ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/01-2»

ք. Երևան «02» «04» 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[1] *Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում

Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **19** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը ստանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դպրական դեպարտամենտ	***«ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ. շ. 3 բն. 9
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00241595
Հ/Հ՝ -	Հ/Հ՝ 1660019711410100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ
Ղեկավար՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Է. Մկրտչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 02 » « 04 » 2026թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-26/01-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	մատուցման միավոր առավելագույն գինը (ՀՀ դրամ)	մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը (ՀՀ դրամ)	ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը (ՀՀ դրամ)	պայմանագրի առավելագույն գինը (ՀՀ դրամ)	չափման միավորը	քանակը	մատուցման	
										հասցեն	ժամկետը
3	50111130/503	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /GAZ 330202/	Համաձայն կից ներկայացված ցանկ 3-ի		5 801 000	3 888 000	1 400 000	դրամ	1	Ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում:	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 22-ը:

Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված հինգ օրացուցային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում, յոթ օրացուցային օրվա ընթացքում՝ պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առաջին գրանցման դեպքում ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված քսան օրացուցային օրվա ընթացքում: Առանձին դեպքերում, երբ փոխարինվող պահեստամասերը տվյալ պահին առկա չեն՝ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:

Կատարողը կարող է ծառայությունները մատուցել սահմանված ժամկետներից ավելի կարճ ժամկետներում:

Յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար՝ Պատվիրատուի պահանջով Կատարողի կողմից կազմվում, հաստատվում և Պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և գնահատման ակտ:

Այն մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է փոխարինել նորով, որոնց համար պետք է տրվի առնվազն 6 ամիս երաշխիքային ժամկետ:

Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված:

Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը, ներառյալ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագիրը (համաձայնագրերը), ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ -
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար Ա. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ. շ. 3 բն. 9
ՀՎՀՀ՝ 00241595
Հ/Հ՝ 1660019711410100
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Է. Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՑԱՆԿ 3

GAZ 330202, 2014թ.

Հ/Հ	SU-1,SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Միավոր առավելագույն գինը (ՀՀ դրամ)
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	
1	Բռնկման համակարգի ստուգում	3 000
2	Սառեցման համակարգի ստուգում	3 000
3	Յուղման համակարգի ստուգում	3 000
4	Արտացման համակարգի ստուգում	3 000
5	Կցորդման համակարգի ստուգում	3 000
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	3 000
8	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	3 000
9	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3 000
10	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	3 000
11	ABS համակարգի ստուգում	
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3 000
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3 000
14	Թափքի վիճակի ստուգում	3 000
15	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	3 000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը	
16	Շարժիչի հանում տեղադրում	25 000
17	Շարժիչի վերանորոգում	50 000
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	5 000
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5 000
20	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	30 000
21	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	7 000
22	Շարժիչի գլխիկի վերանորոգում	50 000
23	Փականի խցուկի փոխարինում	15 000
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	10 000
25	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	
26	Հրիչի փոխարինում	
27	Ատամնավոր փոկի փոխարինում	
28	Փոկանիվի փոխարինում	
29	Ձգող հոլովակի փոխարինում	5 000
30	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	8 000
31	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	20 000
32	Մխոցային օղակների փոխարինում	25 000
33	Թափանիվի հանում և տեղադրում	15 000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
34	Յուղի պոմպի փոխարինում	15 000
35	Շարժիչի յուղի փոխարինում	1 000
36	Ղեկավարման բլոկի վերանորոգում	35 000
37	Բռնկման կարգավորում	
38	CO կարգավորում	3 000
39	Օդի զտիչի փոխարինում	2 000
40	Սրահի զտիչի փոխարինում	2 000
41	Ինժեկտորի ֆորսունկի փոխարինում	5 000
42	Ինժեկտորի ֆորսունկի մաքրում	12 000
43	Վառելիքիմղիչի փոխարինում	6 000
44	Վառելիքի զտիչի փոխարինում	6 000
45	վառելիքի բաքի հանում և տեղադրում	15 000
	3. Սառեցման և արտածման համակարգ	
46	Հովհարի փոկի հանում և տեղադրում	
47	Հովհարի հանում և տեղադրում	5 000
48	Ռադիատորի հանում և տեղադրում	5 000

49	Ռադիատորի վերանորոգում	15 000
50	Թերմոստատի փոխարինում	10 000
51	Ջրի պոմպի փոխարինում	12 000
52	Ընդարձակող բաքի փոխարինում	5 000
53	Խլարարի հանում և տեղադրում	5 000
54	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	5 000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
55	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	8 000
56	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	10 000
57	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	25 000
58	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	10 000
59	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	5 000
60	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	
61	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	
62	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	
63	ԱՓՏ-ի վերանորոգում	
64	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	
	5. Առջևի և հետևի կամրջակներ	
65	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	60 000
66	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	120 000
67	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	100 000
68	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	25 000
69	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	30 000
	6. Կախոց	
70	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	35 000
71	Տրավերսի հանում և տեղադրում	
72	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	
73	Անվակունդի առանցքակալի փոխարինում	10 000
74	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	
75	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	
76	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	
77	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	
78	Զսպանակի հանում և տեղադրում	
79	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	
80	Ներքևի լծակի հանում և տեղադրում	
81	Ներքևի լծակի վռանների փոխարինում	
82	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	10 000
83	Միջին ձգանի հանում և տեղադրում	
84	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	15 000
85	Վերևի լծակի հանում և տեղադրում	
86	Վերևի լծակի վռանների փոխարինում	
87	Գնդե հոդակապերի փոխարինում	
88	Ծայրակալների հանում և տեղադրում	
89	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	
90	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	
91	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	
92	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	
93	Հետևի զսպանակի փոխարինում	
94	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8 000
95	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	
96	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	
97	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	
98	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	
99	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	
100	Անվաբացքի կարգավորում	6 000
101	Ջոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	3 000
	7.Ղեկային մեխանիզմ	
104	Ղեկային կալունի հանում և տեղադրում	15 000
105	Ղեկային կալունի վերանորոգում	50 000
106	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	10 000

107	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	15 000
108	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	15 000
109	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	
110	Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում	15 000
111	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	45 000
112	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	65 000
	8. Արգելակային համակարգ	
113	Գլխ.գլանի հանում և տեղադրում	15 000
114	Գլխ. գլանի վերանորոգում	10 000
115	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	15 000
116	Բանվ. գլանի հանում և տեղադրում	10 000
117	Բանվ. գլանի վերանորոգում	10 000
118	Արգելակային համակարգի օդահանում	1 000
119	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	3 000
120	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	
121	Առջևի սուպպորտի վերանորոգում	10 000
122	Հետևի սուպպորտի վերանորոգում	
123	Արգելակային փողրակի փոխարինում	5 000
124	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	6 000
125	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	
126	Հետևի կոճղակների փոխարինում	8 000
127	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	6 000
128	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	
129	Արգելակային սկավառակի հղկում	8 000
130	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	3 000
131	ABS-ի հանում և տեղադրում	
132	ABS-ի վերանորոգում	
133	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	15 000
134	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	15 000
	9. Էլեկտրասարքավորում	
135	Էլեկտրասարքավորման վերանորոգում	35 000
136	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	15 000
137	Գեներատորի հանում և տեղադրում	12 000
138	Գեներատորի վերանորոգում	12 000
139	Մեկնարկիչի հանում և տեղադրում	12 000
140	Մեկնարկիչի վերանորոգում	12 000
141	Առջևի լապտերի հանում և տեղադրում	10 000
142	Հետևի լապտերի հանում և տեղադրում	10 000
143	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	15 000
144	Վազքաչափի հանում և տեղադրում	15 000
145	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	
146	Սարքերի պանելի հանում և տեղադրում	15 000
147	Արագաչափի հանում և տեղադրում	10 000
148	Ազդանշանի հանում և տեղադրում	10 000
149	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	12 000
150	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	20 000
151	Ազդանշանային համակարգի տեղադրում	10 000
152	Մագնիտոլային տեղադրում	10 000
153	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	6 000
154	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	25 000
155	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	25 000
156	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	25 000
157	Էլեկտրական տվիչների փոխարինում	5 000
158	Էլեկտրական անջատիչների փոխարինում	5 000
159	Վառոցքի կոճի փոխարինում	8 000
160	Վառոցքի մոմի փոխարինում	5 000
161	Կոնդիցիոների լիցքավորում	
162	Կոնդիցիոների վերանորոգում	
	10. Այլ ծառայություններ	
163	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գինը 1 քառ.դմ-ի համար	10 000

164	Անիվի հանում և տեղադրում	2 000
165	Անվադողի վերանորոգում	2 000
166	Անիվի բալանսավորում	2 000
167	Անիվի վալց	12 000
168	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	5 000
169	Խառատային աշխատանքներ, գին 1ժ համար	5 000
170	Փականագործի աշխատանքներ, գին 1ժ համար	5 000
171	Քարշակի ծառայություն գին 1կմ, համար	1 500
172	Սրահի քիմմաքրում	30 000
173	Դիմապակու հանում և տեղադրում	25 000
174	ռետինե գորգերի հավաքածու	15 000
175	Ապակիների թաղանթապատում	25 000
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	1. Շարժիչ	
1	Շարժիչի բլոկ	210 000
2	Շարժիչի գլխիկ	225 000
3	Բարձիկ	15 000
4	Շարժիչի գլխակի միջադիր	5 000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	12 000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	25 000
7	Շարժիչի փական դուրս մղող	5 000
8	Շարժիչի փական ներս մղող	5 000
9	Շարժիչի փականի խցուկ	1 000
10	Ծնկաձև լիսեռ	156 000
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	3 000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	3 000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	8 000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	8 000
15	Հենակային տափողակ	3 000
16	Մխոց	10 000
17	Մխոցային օղակներ	25 000
18	Ատամնանիվ	
19	Ատամնավոր փոկ	
20	Շղթա	20 000
21	Հիդրոձգան	10 000
22	Հրիչ	12 000
23	Հրիդրոհրիչ	6 000
24	Բամշակ	5 000
25	Հանգստարար	5 000
26	Թափանիվ	60 000
27	Թափանիվի պսակ	12 000
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	
29	Շկիվ	20 000
30	Շարժաթև	30 000
31	Կարտերի միջադիր	5 000
32	Միջադիր	10 000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
33	Յուղի պոմպ	85 000
34	Յուղի պոմպի շարժաբեր	
35	Յուղի ռադիատոր	
36	Յուղի փողրակ	
37	Յուղի ծորակ	
38	Շարժիչի յուղ	3 000
39	Շարժիչի յուղի զտիչ	1 000
40	Վառոցքի մոմ	4 000
41	Վառոցքի կոճ	25 000
42	Բենզոբաք	100 000
43	Ինժեկտորի ֆորսունկա	15 000
44	Վառելանյութի մղիչ էլեկտրական	20 000

45	Վառելանյութի զտիչ	15 000
46	Վառելանյութի զտիչի նուրբ մաքրման	5 000
47	Վառելանյութի փողրակ	5 000
48	Աքսելերատորի ճոպան	5 000
49	Օդի զտիչ	8 000
50	Ջերմաստիճանային տվիչ	6 500
51	Յուղի տվիչ	6 500
52	Բաշխիչ լիսեռի տվիչ	12 000
53	Օդի ծախսի տվիչ	15 000
54	Արագաչափի տվիչ	15 000
55	Հովիարի տվիչ	5 000
56	Ջրի տվիչ	6 000
57	Բենզոբաքի տվիչ	20 000
58	Մարման ընթացքի կարգավորիչ	20 000
59	Մարման ընթացքի տվիչ	15 000
60	Ղեկավարման համակարգիչ	80 000
61	Պարապ ընթացքի տվիչ	15 000
62	Դրոսելային փականի տվիչ	8 000
63	Թթվածնի տվիչ	35 000
	3. Սառեցման և արտածման համակարգ	
64	Հովիարի փոկ	[redacted]
65	էլեկտրական հովիար	25 000
66	Ռադիատոր	75 000
67	Ընդարձակող բաք	10 000
68	Ռադիատորի փողրակ	5 000
69	Թերմոստատ	10 000
70	Ջրի պոմպի թևակ	10 000
71	Ջրի պոմպի առանցքակալ	10 000
72	Ջրի պոմպի թևակ	10 000
73	Սառեցման հեղուկ 1 լիտր	2 000
74	Ջրի պոմպի սոնանիվ	10 000
75	Հոլովակ	10 000
76	Փոկ	10 000
77	Փոկ կոնդիցիոների	[redacted]
78	Սրահի զտիչ	
79	Ծորակ	10 000
80	Խլարարի ներդիր	2 000
81	Խլարարի կախոց	3 000
82	Կրոնշտեյն	3 000
83	Անուր (Խամուտ)	3 000
84	Խլարար	25 000
85	Ռեզոնատոր	45 000
86	Վառարանի ռադիատոր	20 000
	4.Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
87	Կցորդման բանվորական գլան	12 000
88	Կցորդման գլխավոր գլան	15 000
89	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	10 000
90	Կցորդման տանող սկավառակ	25 000
91	Կցորդման տարվող սկավառակ	22 000
92	Կցորդման առանցքակալ	8 000
93	Կցորդման փողրակ	5 000
94	Համաժամիչ	15 000
95	Մուֆտ	15 000
96	ԱՓՏ-ի զտիչ	[redacted]
97	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	
98	ԱՓՏ-ի սոլենոիդ	
99	ԱՓՏ յուղ, 1 լիտր	
100	Հերմետիկ	
	5. Առջևի կամ հետևի կամրջակներ	
101	Ռեդուկտոր	150 000

102	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	65 000
103	Դիֆֆերենցիալ	45 000
104	Դիֆֆերենցիալի սատելլիտ	45 000
105	Տանող ատամնանիվի խցուկ	5 000
106	Տանող ատամնանիվի առանցքակալ	5 000
107	Դիֆֆերենցիալի առանցքակալ	12 000
108	Կիսասռնի	45 000
109	Կիսասռնու առանցքակալ	12 000
110	Կիսասռնու միջադիր	2 000
111	Կիսասռնու խցուկ	2 000
112	Կարգավորիչ տափողակ	3 000
	6. Կախոց	
113	Տրավերս	[redacted]
114	Կրոնշտեյն	
115	Ձախ կամ աջ հոդակապ	
116	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	
117	Անվակունդ	35 000
118	Անվակունդի խցուկ	3 000
119	Անվակունդի ներքին առանցքակալ	15 000
120	Անվակունդի արտաքին առանցքակալ	15 000
121	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	[redacted]
122	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	
123	Ձախ կամ աջ հեդակապի խցուկ	
124	Հարվածամեղմիչի թասակ	
125	Ջսպանակ	
126	Առջևի հարվածամեղմիչ	15 000
127	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	2 000
128	Հարվածամեղմիչի վռան	3 000
129	Ներքևի լծակ	[redacted]
130	Ներքևի լծակի վռան	
131	Վերևի լծակ	
132	Վերևի լծակի վռան	
133	Գնդե հոդակապ	
134	Առջևի կայունարար	
135	Առջևի կայունարարի վռան	
136	Առջևի կայունարարի կանգնակ	
137	Առջևի կայունարարի առջևի վռան	
138	Հետևի կայունարարի վռան	
139	Հետևի կայունարարի կանգնակ	
140	Հետևի զսպանակ	
141	Հետևի ցնցամեղմիչ	
142	Հետևի մետաղաձող (շտանգա)	
143	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	
144	Հետևի անկյունագծային լծակ	
145	Անկյունագծային լծակի վռան	
146	Ջսպակի միջադիր	5 000
147	Ջսպակի բռնիչ	10 000
148	Աջ կամ ձախ ձգան	12 000
149	Ծայրակալ	12 000
150	Ձգան մեջտեղի	[redacted]
151	Անվահեծ	35 000
	7. Ղեկային մեխանիզմ	
152	Ղեկային կալուն	120 000
153	Ղեկային կալունի առանցքակալ	12 000
154	Ղեկային կալունի խաչուկ	12 000
155	Հիդրոուժեղարար	80 000
156	Հիդրոուժեղարարի փոկ	7 000
157	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	15 000
158	Հիդրոուժեղարարի պոմպ	75 000
159	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10 000

160	Ղեկային ձող	
161	Ղեկային ձողի ծայրակալ	15 000
162	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	15 000
	8. Արգելակային համակարգ	6 000
163	Գլխ. գլան	
164	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	20 000
165	Վակումային ուժեղարար	10 000
166	Բանվ. գլան	40 000
167	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	12 000
168	Արգելակային փողրակ	5 000
169	Սուպպորտի ուղղորդիչ	5 000
170	Սուպպորտի մոնժետ	5 000
171	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	5 000
172	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	8 000
173	Հետևի թմբուկայն կոճղակների կոմպլեկտ	
174	Առջևի արգելակային սկավառակ	14 000
175	Հետևի արգելակային սկավառակ	25 000
176	Ձեռքի արգելակային ճոպան	
177	ABS-ի տվիչ	6 000
178	Արգելակային հեղուկ, DOT-3 - 500գրամ	
179	Արգելակային հեղուկ, DOT-4 - 500գրամ	6 000
180	Ձեռքի արգելակման բռնակ	3 000
	9. Էլեկտրասարքավորում	25 000
181	Գեներատոր	
182	Գեներատորի դիոդային կամրջակ	70 000
183	Գեներատորի ռելե	12 000
184	Գեներատորի առանցքակալ	12 000
185	Գեներատորի խարիսխ	6 000
186	Գեներատորի խարիսխի հետևի պլասմաս	20 000
187	Գեներատորի առջևի իրան	4 000
188	Գեներատորի հետևի իրան	10 000
189	Գեներատորի փաթույթ	20 000
190	Գեներատորի փոկանիվ	25 000
191	Գեներատորի կալունակ	10 000
192	Գեներատորի կոլեկտոր	5 000
193	Մեկնարկիչ	5 000
194	Մեկնարկիչի ռելե	60 000
195	Մեկնարկիչի ածուխ	15 000
196	Բենդեքս	15 000
197	Մեկնարկիչի կցորդիչ (ավտոմատ)	15 000
198	Առջևի լապտեր	20 000
199	Առջևի թարթիչ	55 000
200	Հետևի լապտեր	15 000
201	Հետևի թարթիչ	30 000
202	Արգելակային լապտեր	10 000
203	Հակամշուշային լապտեր	30 000
204	Խցիկի լապտեր	15 000
205	Խցիկի լապտերի լամպ	5 000
206	Լամպ (քսենոն բլոկով)	3 000
207	Առջևի լապտերի լամպ	
208	Հետևի լապտերի լամպ	5 000
209	Առջևի թարթիչի լապտերի լամպ	2 000
210	Հետևի թարթիչի լապտերի լամպ	2 000
211	Հակամշուշային լապտերի լամպ	2 000
212	Արգելակային լապտերի լամպ	5 000
213	Էլեկտրական անջատիչ	2 000
214	Էլեկտրական տվիչ	5 000
215	Էլեկտրական չափիչ սարք	5 000
216	Բռնկման կողպեք	15 000
217	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	20 000
		65 000

218	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	50 000
219	Վառոցքային լարերի խուրց	15 000
220	Վառոցքի մոմի ծայրակալ	2 500
221	Վազքաչափ	20 000
222	Վազքաչափի ճոպան	[redacted]
223	Արագաչափ	25 000
224	Ազդանշան	20 000
225	Ապակելվացիչ	25 000
226	Ապակելվացիչի շարժիչ	20 000
227	Ապակեմաքրիչ	5 000
228	Ապակեմաքրիչի խոզանակներ	5 000
229	Դռների կենտրոնական փական	15 000
230	Ազդանշանային համակարգ	25 000
231	Մարտկոց	50 000
232	Էլեկտրաամբարձիչ	25 000
233	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	20 000
234	Ներկ. լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	8 000
235	Դիմապակի	35 000
236	Դիմապակու ռեզին	15 000
Առավելագույն միավոր գների հանրագումարը		**5 801 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ -
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ. շ. 3 բն. 9
ՀՎՀՀ՝ 00241595
Հ/Հ՝ 1660019711410100
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Է. Մկրտչյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«02» «04» 2026թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-26/01-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	50111130/503	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /GAZ 330202/	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ -
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ. շ. 3 բն. 9
ՀՎՀՀ՝ 00241595
Հ/Հ՝ 1660019711410100
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Է. Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 02 » « 04 » 2026թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-26/01-2» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 02 » « 04 » 2026թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-26/01-2» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« 02 » « 04 » 2026թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-26/01-2» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.